51 Ով Փրկիչս, օրն իջած է,

1. Ով Փրկիչս, օրն իջած է,
Կաղաչեմ Քեզ, քովս կեցի՛ր,
Թանձր մութն արդեն իջած է,
Այս գիշեր իմ հյուրս եղի՛ր:
Երբ պակսին օգնականներս,
Դուն միայն ես օգնական,
Բազմաթիվ են վտանգներս,
Ո՜հ, եղի՛ր ինծի պաշտպան:

2. Աշխարհիս պայծառությունը
Շատ չանցած կը մթննա,
Փառքն ու մեծ վայելչությունը
Շուտ աներևույթ կ՚ըլլա:
Բայց Դուն ես հույսիս արևը,
Հավիտյան Դուն չես փոխվիր,
Ճառագայթներուդ պարգևը
Շնորհե ինձ, քովս կեցիր:

3. Շատ անգամ, Տե՛ր, Քեզ մոռցած
եմ,
Սակայն Դուն զիս մի՛ մոռնար,
Շատ անգամ Քեզ թողուցած եմ,
Բայց ինձմե մի՛ հեռանար:
Ով Հիսուս, հոգվույս Փրկիչը,
Հետս կենալ Դուն խոսք տվիր,
Երբ որ անօրեն փորձիչը
Հարձակի վրաս, քովս կեցի՛ր:

4. Եվ վերջին թշնամիին վրա
Տուր, որ հաղթանակ երգեմ,
Իմ վրաս հարձակած ատենը՝
«Ո՞ւր է քո խայթոցդ»,- ըսեմ:

Որ մահեն, Տե՛ր, ազատվիմ ես,
Դառն մահվան Քեզ հանձնեցիր,
Թող մահվան մեջ չընկղմիմ ես,
Մինչև վերջը քովս կեցի՛ր: